



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Ձեկուցում տարեց կամ չափահաս հաշմանդամ անձանց հանդեպ գործադրված բռնության վերաբերյալ

Դեկտեմբեր 2010, հրապ. #7024.10-Armenian

Դուք պաշտպանության հատուկ միջոցներ ունեք, եթե չափահաս հաշմանդամ կամ տարեց եք, ով բռնության է ենթարկվել, արհամարհվել կամ հանցագործության թիրախ է դարձել հաշմանդամության պատճառով:

1. Ի՞նչ է բռնությունը: [Սեղմեք ստորև տրված հղմանը՝ պարզելու, թե ինչը կարող է համարվել բռնություն:](#)
2. Ի՞նչ է արհամարհանքը: [Սեղմեք ստորև տրված հղմանը՝ պարզելու, թե ինչը կարող է համարվել արհամարհանք:](#)
3. Ի՞նչ է հանցագործությունը: [Սեղմեք ստորև տրված հղմանը՝ պարզելու, թե ինչը կարող է համարվել հանցագործություն:](#)

Ո՞ւմ պետք է զանգահարեմ:

Եթե Դուք ապրում եք համայնքում, ինչպես օրինակ՝ Ձեր սեփական տանը, հյուրանոցում, կամ հիվանդանոցում խնամք եք ստանում, կլինիկական կամ ուսուցման ծրագրի եք մասնակցում, ապա պետք է դիմեք՝

- Ոստիկանության [Ձեր տեղական բաժանմունք](#) կամ ոստիկանապետի վարչությանը կամ կամ 911:

Եվ

- Ձեր վարչաշրջանի չափահասների պաշտպանության ծառայությունների (APS, Adult Protective Services) գործակալությանը: Ձեր [վարչաշրջանի](#) APS գործակալությունը գտնելու համար սեղմեք [այստեղ](#):

Եթե Դուք ապրում եք այնպիսի հաստատությունում, ինչպես օրինակ՝ խմբային տանը, ծերանոցում կամ ինտերնատում (օրինակ աջակցված ապրելակերպով կամ ծերանոցում ապրելու դեպքում), ապա պետք է դիմեք՝

- [Ոստիկանության Ձեր տեղական բաժանմունք](#) կամ ոստիկանապետի վարչությանը կամ կամ 911:

Եվ

- [Երկարաժամկետ խնամքի օմբուդսմենին \(Long-Term Care Ombudsman\) \(LTCO\)](#): Ձեր տեղական օմբուդսմենի ծրագիրը գտնելու համար սեղմեք [այստեղ](#) կամ զանգահարեք նահանգային LTCO ճգնաժամային հեռախոսահամարով՝ 1-800-231-4024:

Եվ

- [Կալիֆորնիայի հանրային առողջապահության վարչություն \(\(The California Department of Public Health \(DPH\)\)](#)): DPH-ը ստուգում է առողջապահական հաստատությունները և հետաքննում է բռնությանը, արհամարհանքին կամ վատ խնամքին վերաբերող բողոքները: Ձեր տեղական գրասենյակի հեռախոսահամարը կարելի է գտնել՝ սեղմելով [այստեղ](#):

Եվ

- [Կալիֆորնիայի գլխավոր դատախազության \(The California Attorney General\) Medi-Cal-ի խարդախությունների և տարեցների բռնության գրասենյակը](#) (BMFEA), որն աշխատում է ծերանոցներում կամ երկարաժամկետ խնամքի այլ հաստատություններում Ձեզ բռնությունից կամ արհամարհանքից պաշտպանելու համար: Ձեր հանդեպ գործադրված բռնության մասին զեկուցելու համար դիմեք գլխավոր դատախազության

Էջ 3` 8

անվճար թեժ գծին՝ (800) 722-0432 հեռախոսահամարով կամ
կայքէջին՝ սեղմելով [այստեղ](#):

Օրենքներ և կանոնակարգեր

- [Կալիֆորնիայի Բարեկեցության և հաստատությունների Օրենսգիրք, §§ 15630-15632 Տարեցների բռնություն և կախում ունեցող չափահասների բռնության քաղաքացիական պաշտպանության օրենք \(Cal. Welf. & Inst. Code §§ 15630-15632 Elder Abuse and Dependent Adult Abuse Civil Protection Act\)](#)
- [Կալիֆորնիայի Բարեկեցության և հաստատությունների Օրենսգիրք § 15700 Պաշտպանիչ տեղադրումներ և վտանգի տակ գտնվող չափահասների ինսամակայություն \(Cal. Welf. & Inst. Code § 15700 Protective Placements and Custody of Endangered Adults\)](#)
- [Կալիֆորնիայի Բարեկեցության և հաստատությունների Օրենսգիրք §§ 15703-15705.40 Պաշտպանիչ ծառայություններ \(Cal. Welf. & Inst. Code §§ 15703-15705.40 Protective Services\)](#)
- [Կալիֆորնիայի Քրեական օրենսգիրք § 368 տարեցների և կախում ունեցող չափահասների հանդեպ կատարված հանցագործություններ \(Cal. Pen. Code § 368 Crimes Against Elders and Dependent Adults\)](#)

Ի՞նչ է «Disability Rights California»-ն:

[«Disability Rights California»](#)-ն ոչ առևտրային կազմակերպություն է, որն աշխատում է՝ պաշտպանելու և աջակցելու Ձեզ այն խնդիրների դեպքում, որոնք Դուք կարող եք ունենալ Ձեր հաշմանդամության առնչությամբ: Ծառայությունները, որոնք մենք կարող ենք տրամադրել, ներառում են՝

1. Ձեզ տեղեկացնելը Ձեր օրինական, քաղաքացիական և ծառայությունների իրավունքների մասին.
2. Հետաքննական բողոքներ ֆիզիկական բռնության, սեռական բռնության կամ արհամարհանքի մասին.

3. Հաշմանդամ անձանց կրթության, խտրականության, նպաստների և զբաղվածության ոլորտներում ներկայացուցչություն.

Եթե Դուք որևէ հարց ունեք Ձեր հաշմանդամության առնչությամբ, Դուք կարող եք դիմել մեր գրասենյակներից որևէ մեկին՝ զանգահարելով **1-800-776-5746** հեռախոսահամարով կամ ինտենետի միջոցով՝ սեղմելով [այստեղ](#):

Սահմանումներ.

Բռնություն.

Բռնությունը կարող է 3 տարբեր արտահայտում ունենալ.

1. Ֆիզիկական.

Ինչ-որ մեկը դիտմամբ ցավեցնում է Ձեր մարմինը:

- Օրինակ՝ հարվածել, ոտքով հարվածել, այրել, խայթել, թափահարել կամ առարկա օգտագործել՝ Ձեզ հարվածելու համար:
- Կարիք չկա, որ Դուք կապտուկ կամ ցավ ունենաք, որպեսզի համարվի, որ Դուք ֆիզիկական բռնության եք ենթարկվել:

2. Սեռական.

Ինչ-որ մեկը դիտմամբ հպում է Ձեր մարմնին, երբ Դուք դրանից անհարմար եք զգում:

- Ձեր սեռական օրգաններին դաչելը.
- Լոգանքի հագուստ հագած ժամանակ Ձեզ դիպչելը:
- Մերկ ժամանակ Ձեզ նկարելը:
- Իր սեռական օրգաններին Ձեր առջև կանգնելով դիպչելը:

3. Էմոցիոնալ

Ինչ-որ մեկն օգտագործում է բառեր և ոչ ֆիզիկական ձևեր՝ Ձեզ դիտմամբ նեղելու համար

- Ձեզ բառերով ահաբեկելը.
- Դիտմամբ Ձեզ նեղելը.
- Ձեզ անիծելը.
- Ձեզ խոսքակոխ անելը.
- Ձեզ հեռու պահելն այն մարդկանցից, ում Դուք ցանկանում եք հանդիպել.
- Ձեզ հաճույք պատճառող բաներից հեռու պահելը.
- Ձեր դեմ սպառնալից շարժումներ կատարելը:

Արհամարհանք.

Երբ ենթադրվում է, որ ինչ-որ մեկը պետք է հոգ տանի Ձեր մասին, բայց չի հոգում Ձեր կարիքները, օրինակ`

1. Ձեզ բավարար չափով սնունդ, հագուստ կամ ապաստարան չի տրամադրում.
2. Չի հոգում Ձեր ֆիզիկական և բժշկական կարիքները.
3. Ձեզ մաքուր չի պահում.
4. Ձեզ չի տալիս Ձեր դեղամիջոցները.
5. Ձեզ չի օգնում տեղաշարժվել.
6. Տարածքը մաքուր չի պահում, որպեսզի Դուք առանց ընկնելու տեղաշարժվեք:

Հանցագործություն.

Երբ ինչ-որ մեկը [բռնություն է գործադրում Ձեր հանդեպ](#) կամ [արհամարհում է Ձեզ](#), դա **հանցագործություն է**:

Հացագործությունը նաև մի քանի ավելի բաներ է ներառում, որոնք են`

1. Ֆիզիկական սահմանափակման ոչ պատշաճ օգտագործում.
 - Օրինակ Ձեզ կապում է ինչ-որ մի տեղ, որտեղից Դուք չեք կարող շարժվել.
 - Որևէ այլ բանի օգտագործում` կանխելու Ձեր շարժվելը.
 - Ճանկում կամ այնպես է բռնում Ձեզ, որ Դուք չեք կարողանում շարժվել:
2. Զիջման սահմանափակման կամ դեղամիջոցների ոչ պատշաճ օգտագործում.
 - Օրինակ` Ձեզ այնպիսի դեղամիջոցներ տալը, որոնք Ձեզ քնկոտ կամ հոգնած են դարձնում, բայց չեն նպաստում Ձեր ավելի լավ զգալուն:
3. Ֆիզիկական բռնություն.
 - Օրինակ` երբ ինչ-որ մեկը վերցնում է Ձեր դրամը կամ գույքը` առանց Ձեր թույլտվության:

- Ձեր ընտանիքի ինչ-որ մի անդամ կարող է շարունակել ֆինանսապես բռնություն գործադրել Ձեր հանդեպ, եթե նա վերցնի Ձեր դրամը կամ Ձեզ պատկանող իրերը՝ առանց Ձեր թույլտվության, նույնիսկ եթե Դուք ազգակցական կապ ունեք:

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցումը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [անդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով(Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա):

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝ <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.